ՆԱԽԱԳԻԾ

Կ-217³-28.03.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական սահմանի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265-Ն օրենքի (այուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասում «զինծառայողները» բառից հետո լրացնել «կամ մաքսային մարմինները» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Վերահսկողությունը եվ հսկողությունը պետական սահմանը հատելիս

1. Պետական սահմանի անցման կետերում մշտական վերահսկողություն եւ հսկողություն են իրականացնում միայն սահմանային վերահսկողություն իրականացնող սահմանապահ զորքերի զինծառայողները եւ մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմինները:

2. Պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային վերահսկողության, մաքսային հսկողության, ինչպես նաեւ օրենքով սահմանված դեպքերում սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության:

3. Սույն օրենքի իմաստով սահմանային այլ վերահսկողությունը կամ հսկողությունը սույն օրենքով նախատեսված սահմանային վերահսկողություն եւ մաքսային հսկողություն չհանդիսացող պետական վերահսկողությունը կամ հսկողությունն է պետական սահմանի անցման կետերում:

4. Պետական սահմանի անցման կետերում օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողությունը կամ հսկողությունը իրականացնում են սահմանապահ զորքերը կամ մաքսային մարմինները տվյալ գործառույթի ոլորտը կարգավորող օրենքով ուղղակի նախատեսված լինելու դեպքում:

5. Առանձին դեպքերում օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանկառավարության որոշմամբ պետական սահմանի անցման կետերում ժամանակավորապես կարող են տեղակայվել օրենքով վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու գործառույթ իրականացնող այլ պետական մարմիններ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված այլ պետական մարմինների տեղակայման կարգը, ժամկետները եւ առանձին դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունըկառավարությունը:

7. Սահմանային վերահսկողության եւ մաքսային հսկողության աշխատանքները կարող են կազմակերպվել համատեղ: Սույն մասով նախատեսված աշխատանքների համատեղ կազմակերպման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունըկառավարությունը:»:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածում «սահմանապահ զորքերի թույլտվությամբ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:սահմանապահ զորքերի թույլտվությամբ՝» բառերը փոխարինել «համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանկառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Մաքսային հսկողություն, սահմանային վերահսկողություն եւ օրենքով նախատեսված դեպքերում սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթ իրականացնելու ժամանակամիջոցում անձանց մուտքն ուղեւորների եւ

բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ սահմանափակվում է, իսկ անհրաժեշտության դեպքում կարող է նաեւ արգելվել:»:

2. 4-րդ մասում «պահանջով, մաքսային մարմինների համապատասխան ներկայացուցիչների ներկայությամբ» բառերը փոխարինել «կամ մաքսային մարմինների պահանջով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Պետական սահմանի անցման կետերում առանձնացվում է տարածք, շինություն, որտեղ ուղղակիորեն իրականացվում են սահմանային վերահսկողություն, մաքսային հսկողություն եւ օրենքով նախատեսված դեպքերում նաեւ սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ: Այդ տեղերում մտցվում են լրացուցիչ ռեժիմային սահմանափակումներ՝ սույն օրենքի 24-26-րդ հոդվածներով նախատեսված կարգի ու կանոնների սահմաններում:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում լրացնել նոր «դ)» կետ հետեւյալ բովանդակությամբ.

«դ) օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ:».

2. «նախապատրաստական աշխատանքներին:» բառերից հետո Լրացնել նոր մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության մաքսային հսկողության բնագավառի պետական լիազորված մարմինը՝

ա) իրականացնում է մաքսային հսկողություն.

բ) օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է սահմանային այլ վերահսկողության կամ հսկողության գործառույթներ:

Հոդված 7. Օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասից հանել «այլ» բառը:

Հոդված 8.

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Պետական սահմանի անցման կետերում մինչև «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարգի սահմանումը իր իրավասության սահմաններում վերահսկողությունն իրականացնում է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածով «Պետական սահմանի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 14-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերով և 3-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: